

- Գլուխը կտրեմ, սիրտը հանեմ, ջուր տամ խօսի:
(Փետրեայ գրիչը).
- Էն ձր կենթանին ա, որ օխաը տարէնը մշեա ա ցուլ զալի:
(Փիղը).
- Կարմիր կաշի, սիպտակ միս, սև ոսկոռ.
(Փշատը).
- Իմ պապը ծմակըմը, ոտները կրակըմը:
(Փուքսը).
- Պուճուր ծիտը մարթին սիրէկան:
(Փողը).
- Էն Բնչն ա ինչ, մարմին չունի, ձէն ունի:
(Քամին).
- Երգէն էրէց, քինթը կեռ:
(Քարշիկը).
- Մի սնանի,
էրկու սնանի:
(Քարշիկը).
- Դուքսը միս, մէշը կաշի:
(Քարճիկը).
- Մի օթախ էրկու դոնանի,
Քշեր ցերեկ միշտ կքանի:
(Քիթը).
- Եղիցը լաւն ա, մեղրիցը քաղցր:
(Քուճը).
- Բազարըմը ծախուիլ չի, քըբըմը քաշուիլ չի, քանց էն ա-
նոշ բան չկայ:
(Քուճը).
- Ալամը չոքեց, զափլանը վիր էլաւ:
(Օղիի կաթսան).
- Գեղնի միջին մի շամփոր:
(Օձը).
- Դոան տակին չալ զամշի:
(Օձը).
- Մարթ կապանի ձեռքեր չունի,
(Օձը).
- Մանէ զալիս ոտներ չունի:
(Օձը).
- Ջան ունի, ձէն չունի, շոր ա հաքնըմ, ձեռներ չունի:
(Օձը).
- Սէլէ սուսան,
Նախէ թուսան:
(Օձը).
- Արխանայ, թարխանայ,
Մէշը լիքը բարխանայ:
(Օրօրոցը).
- Մի քոշ, միջին մի խլապոշ,
Քացի տամ քոշին քուճը տանի:
(Օրօրոցը).

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԿԱՊԱՆՔՆԵՐ.

Աշուղ էն ձր տարին էր,
Հին էր, ոսկէ դարին էր,
Մի տեղ մի մատաղ մորթեցին,
Էն էլ անմիս, անարին էր:

(Աբրահամի մատաղը).

Աշուղ անուճղ ա Բանգի,
Արի խօսենք ուրիշ հանգի,
Էն Բնչ վարդ էր մի օրումը
Բացուեց, ծաղկեց երեք ուսնգի:

(Առաւօտ, ցերեկ, երեկոյ).

Ոնչ հէր ունի և ոնչ մէր,
Ոնչ քիբ ունի, ոնչ ախպեր,
Թէ որ լաւ չի ծառայես,
Քեզ կը թողու միշտ անտէր:

(Աստուած).

Մի տալան կայ էրեսը արին,
Ման է գալիս ամբողջ տարին,
Մոզն ա մտնում ու զուս գալի,
Ոչ միս ունի, ոչ արին:

(Արեգակ).

Աշուղ, հէնց այս առաւօտ,
Մի բան տեսայ զարմանքոտ,
Մի կենդանի ծնուեցաւ,
Ոչ ձեռք ունի և ոչ սուք:

(Արև).

Էն Բնչ զուշ է, թեերը լիս,
Լիս ա տալիս շատ խալիս,
Բայց երբ երկինք է թռչում,
Ոսկոտ չունի և ոչ միս:

(Բոց).

Ինքը զօրեզ իշխան է,
Կեցարանը անպէտ բան է,
Ողջ աշխարքին կշտացնում է,
Մակայն ինքը անկշտան է:

(Թոնիր կամ հացի փուռ).

Աշուղ, ծարաւ եմ, ջուր կուզեմ,
Էս հաղաղս տուր, կուզեմ,
Հէշ վարպէտի ձեռք չդիպած,
Քեզնից ես մի թուր կուզեմ:

(Լեզու).

Մի ծէր մարդ կայ, սրբի բաս ա,
Գլխինը սիպտակ թաս ա,

Շորերը ծալուկ դասուէ դաս ա,
Կամ գտի կամ հախս ասն:
(Կաղամբ).

Առաջին տաղը չորս,
Իուզունը չորս, տաղը չորս,
Էսօր մէկ զարմանք տեսայ,
Քմտղը մէկ՝ սաղին չորս:
(Կոզի պտուկները).

Էն թնչ դուչ է, նախշ ու նկար է,
Հազուսար գիփ ալ ու զար է,
Քոտ է ուտում կանես ոչխար է,
Ջուր չի խմում, անհնար է:
(Հրդեհ).

Աշուղ, թէ միաբոյ ա սուր,
Իմ ասածիս ջուզար տուր,
Մի թասում կայ էրկու ջուր,
Կամ գտի, կամ սաղոյ տուր:
(Ձու).

Աշուղ, խօսքիս ականջ տուր,
Շատ մի խօսալ կցկըտուր,
Էն թնչ տուն է որ շինուեց,
Ոչ դունն ունի, ոչ կըտուր:
(Ձու).

Աշուղ կասեմ մէկ շրից,
Համ գրից է, համ փրից,
Էն թնչ լղնորդ էր որ լղեց,
Ջուրը փախաւ երկրից:
(Մոզուէսի գաւազանը).

Էն ով էր որ գին արաւ,
Անմեղ արեան գին առաւ,
Նախ իւր հօրը սպանեց,
Ազա մօրը կին առաւ:
(Յուզան).

Քեզանից օխար գեղ կուզեմ,
Քօսքիս պատասխան կուզեմ,
Արև չտեսած էրընջից,
Ես անհարել եղ կուզեմ:
(Նաւթ).

Աշուղ, էա խի՞ ես ննջում,
 Ես գրում եմ, դու ջնջում,
 Էն ի՞նչ դուչ աս, որ երբ շնչում աս,
 Փորիցը ծաղիկ աս փնջում:

(Շերամի որդն).

Ղուշը սիրում է իր ճուտին,
 Հաւը մեռած է իր կուտին,
 Էն ի՞նչ դուչ է, ծնում է,
 Մի՞ծ է տալիս իր ճուտին:

(Զղջիկը).

Աշուղ էրեսդ ինձ թէքի,
 Կուզես կանգնի ու չոքի,
 Ես քեզանից միս կուզեմ,
 Ոնց որցի ըլի, ոնց էքի:

(Սունկ).

Մի ձի ունեմ անասնձ աս,
 Կնիկս անպսակ անձ աս,
 Երկու անասկոտ գառը կերայ,
 Թէ որ գանուս մեծ գանձ աս:

(Ստինգներ).

Մի ոչխար կայ, խիստ շատ չաղ է,
 Իւր չորս ոտով նա միշտ կաղ է,
 Մարմին ունի, բայց շունչ չունի,
 Ման չէ գալիս, այլ տուժաղ է:

(Տիկ կամ տիկնոր).

Աշուղ, էն ի՞նչ գործիք աս,
 Երկաթ ու փէտ չի, բայց կարիք աս,
 Երկրագործը եթէ չունի,
 Զի կարող, որ գործի գայ:

(Փոկ).

Մարմին չունի նա ինքը,
 Կուզէ կերթայ երկինքը,
 Չես կարող հասնել, գանել,
 Թէկուզ ման գաս գետինքը:

(Քամի).